# ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

28.07.2017թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի**

**թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/20**

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով «Սյունիք» ՍՊԸ-ի 13.07.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/20 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. <u>«Սյունիք» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>

«Սյունիք» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 13.07.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ Արմավիրի մարզպետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից 06.06.2017թ. հայտարարվել է «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ), որին մասնակցելու նպատակով «Սյունիք» ՍՊԸ-ն՝ Մրցույթի թիվ 1, 2, 4, 5 և 7-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել: Հայտերի բացումը տեղի է ունեցել 21.06.2017թ.: Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման արդյունքում «Սյունիք» ՍՊԸ-ն Մրցույթի 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով զբաղեցրել է 2-րդ տեղ, մինչդեռ՝ նշված չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Միլաքս գրուպ» ՓԲԸ-ի գնային առաջարկում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ 2-րդ չափաբաժնի համար

մասնակիցը ներկայացրել է 28 847 000 ՀՀ դրամի գնային առաջարկ, որի ԱԱՀ-ն օրենքով սահմանված կարգով կազմում է 4 812 400 ՀՀ դրամ, սակայն «Միլաքս գրուպ» ՓԲԸ-ն որպես ԱԱՀ-ի գումար նշել է 4 812 000 ՀՀ դրամ, այսինքն՝ սահմանված չափից 400 ՀՀ դրամ պակաս, իսկ 5-րդ չափաբաժնի մասով մասնակիցը ներկայացրել է՝ 16 108 000 ՀՀ դրամ գնային առաջարկ, որի ԱԱՀ-ն օրենքով սահմանված կարգով կազմում է 2 684 600 ՀՀ դրամ, սակայն «Միլաքս գրուպ» ՓԲԸ-ն որպես ԱԱՀ-ի գումար նշել է 2 685 000 ՀՀ դրամ:

«Սյունիք» ՍՊԸ-ն վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի N 526-Ն որոշման 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Ընկերությունը, Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է մերժել «ԱՄ ՀԲՄԱԾՁԲ-17/6» ծածկագրով մրցույթի թիվ 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Միլաքս գրուպ» ՓԲԸ-ի հայտը և նշված չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Սյունիք» ՍՊԸ-ին, քանի որ Մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից չի պահպանվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 18.07.2017թ. ժամը 14:30-ի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է 13.07.2017թ. բողոքով Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

## 2. ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

ՀՀ Արմավիրի մարզպետարանը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 18.07.2017թ. ժամը 14:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ «ԱՄ ՀԲՄԱԾՁԲ-17/6» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Միլաքս գրուպ» ՓԲԸ-ին, քանի որ վերջինս ներկայացրել էր ցածր գնային առաջարկ:

Ամփոփելով, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ ընդունում է այն փաստական հանգամանքը, որ «Միլաքս գրուպ» ՓԲԸ-ի գնային առաջարկում ԱԱՀ-ն սխալ է հաշվարկված:

## 3. ԳԲԽ-ԱՄ-2017/20 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2017/20 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Արմավիրի մարզպետարանի կարիքների համար Արմավիրի մարզի օբյեկտների վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել

է «ԱՄ ՀԲՄԱԾՁԲ-17/6» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտեր են ներկայացրել «Սյունիք» ՍՊԸ-ն և «Միլաքս գրուպ» ՓԲԸ-ն:

2. Մրցույթի հրավերի ՄԱՍ I-ի 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում ***հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը***, ***որոնցում*** բացակայում են ***գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը*** կամ դրանք ***ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

3. Մրցույթի հրավերի ՄԱՍ I-ի 8.9 կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ***բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան***, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

4. «Միլաքս գրուպ» ՓԲԸ-ն հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ Մրցույթի 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով հետևյալ տեսքով՝

(ՀՀ դրամ)

| Չափա-բաժինների համարները | Ապրանքի անվանումը | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *4* | *5* | *6=3+4+5* |
| 2 | Նոր Կեսարիա համայնքի միջն.դպրոցի վերանորոգում | 24 062 000 /քսանչորս միլիոն վաթսուներկու հազար/ | 4 812 000 /չորս միլիոն ութ հարյուր տասներկու հազար/ | 28 874 000 /քսանութ միլիոն ութ հարյուր յոթանասունչորս հազար/ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5 | Հայկավան համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգում | 13 423 000 /տասներեք միլիոն չորս հարյուր քսաներեք հազար/ | 2 685 000 /երկու միլիոն վեց հարյուր ութսունհինգ հազար/ | 16 108 000 /տասնվեց միլիոն հարյուր ութ հազար/ |

**Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա լրացվող պայմանագրի գնով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.06.2017թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 1 արձանագրության 5-րդ կետի 5.1 ենթակետով արձանագրել է, որ «ԱՄ ՀԲՄԱԾՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգի 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած /ընտրված/ մասնակից է ճանաչվում «Միլաքս գրուպ» ՓԲԸ-ն:

6. «Սյունիք» ՍՊԸ-ն 13.07.2017թ. բողոքով հայտնել է, որ Մրցույթի 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Միլաքս գրուպ» ՓԲԸ-ի գնային առաջարկում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ 2-րդ չափաբաժնի համար մասնակիցը ներկայացրել է 28 847 000 ՀՀ դրամի գնային առաջարկ, որի ԱԱՀ-ն օրենքով սահմանված կարգով կազմում է 4 812 400 ՀՀ դրամ, սակայն «Միլաքս գրուպ» ՓԲԸ-ն որպես ԱԱՀ-ի գումար նշել է 4 812 000 ՀՀ դրամ, այսինքն՝ սահմանված չափից 400 ՀՀ դրամ պակաս, իսկ 5-րդ չափաբաժնի մասով մասնակիցը ներկայացրել է՝ 16 108 000 ՀՀ դրամ գնային առաջարկ, որի ԱԱՀ-ն օրենքով սահմանված կարգով կազմում է 2 684 600 ՀՀ դրամ, սակայն «Միլաքս գրուպ» ՓԲԸ-ն որպես ԱԱՀ-ի գումար նշել է 2 685 000 ՀՀ դրամ:

7. ՀՀ Արմավիրի մարզպետարանը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 18.07.2017թ. ժամը 14:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ «ԱՄ ՀԲՄԱԾՁԲ-17/6» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Միլաքս գրուպ» ՓԲԸ-ին, քանի որ վերջինս ներկայացրել էր ցածր գնային առաջարկ:

Ամփոփելով, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ ընդունում է այն փաստական հանգամանքը, որ «Միլաքս գրուպ» ՓԲԸ-ի գնային առաջարկում ԱԱՀ-ն սխալ է հաշվարկված:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «Սյունիք» ՍՊԸ-ի 13.07.2017թ. ներկայացրած բողոքը՝ կից նյութերով, «Միլաքս գրուպ» ՓԲԸ-ի կողմից «ԱՄ ՀԲՄԱԾՁԲ-17/6» ծածկագրով մրցույթին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 4 հավելվածը՝ գնային առաջարկը, Մրցույթի հրավերը, հայտնում է հետևյալը.

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ-ի դրույքաչափը սահմանվում է 20 տոկոս՝ ապրանքների ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: *Հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:*

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 526-Ն որոշման 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ***ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:*** Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում,

մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***հանձնաժողովը*** ***մերժում է այն հայտերը, որոնցում*** բացակայում են ***գնային առաջարկը*** և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ***ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:*** Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Մրցույթի հրավերի ՄԱՍ I-ի 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: ***Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում*** բացակայում են ***գնային առաջարկը*** և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ***ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

Մրցույթի հրավերի ՄԱՍ I-ի 8.9 կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ***բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան***, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպես, ՀՀ Արմավիրի մարզպետարանի կարիքների համար Արմավիրի մարզի օբյեկտների վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Միլաքս գրուպ» ՓԲԸ-ն:

«Միլաքս գրուպ» ՓԲԸ-ն հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ Մրցույթի 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով հետևյալ տեսքով՝

(ՀՀ դրամ)

| Չափա-բաժինների համարները | Ապրանքի անվանումը | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 4 | 5 | 6=3+4+5 |
| 2 | Նոր Կեսարիա համայնքի միջն.դպրոցի վերանորոգում | 24 062 000 /քսանչորս միլիոն վաթսուներկու հազար/ | 4 812 000 /չորս միլիոն ութ հարյուր տասներկու ութներկու հազար/ | 28 874 000 /քսանութ միլիոն ութ հարյուր յոթանասունչորս հազար/ |
| 5 | Հայկավան համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգում | 13 423 000 /տասներեք միլիոն չորս հարյուր քսաներեք հազար/ | 2 685 000 /երկու միլիոն վեց հարյուր ութսունհինգ հազար/ | 16 108 000 /տասնվեց միլիոն հարյուր ութ հազար/ |

***եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա կվճարվի պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.06.2017թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 1 արձանագրության 5-րդ կետի 5.1 ենթակետով արձանագրել է, որ «ԱՄ ՀԲՄԱԾՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգի 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած /ընտրված/ մասնակից է ճանաչվում «Միլաքս գրուպ» ՓԲԸ-ն:

«Սյունիք» ՍՊԸ-ն 13.07.2017թ. բողոքով հայտնել է, որ Մրցույթի 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Միլաքս գրուպ» ՓԲԸ-ի գնային առաջարկում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ 2-րդ չափաբաժնի համար մասնակիցը ներկայարել է 28 847 000 ՀՀ դրամ գնային առաջարկ, որի ԱԱՀ-ն օրենքով սահմանված կարգով կազմում է 4 812 400 ՀՀ դրամ, սակայն «Միլաքս գրուպ» ՓԲԸ-ն որպես ԱԱՀ-ի գումար նշել է 4 812 000 ՀՀ դրամ, այսինքն՝ սահմանված չափից 400 ՀՀ դրամ պակաս, իսկ 5-րդ չափաբաժնի մասով մասնակիցը ներկայացրել է՝ 16 108 000 ՀՀ դրամ գնային առաջարկ, որի ԱԱՀ-ն օրենքով սահմանված կարգով կազմում է 2 684 600 ՀՀ դրամ, սակայն «Միլաքս գրուպ» ՓԲԸ-ն որպես ԱԱՀ-ի գումար նշել է 2 685 000 ՀՀ դրամ:

ՀՀ Արմավիրի մարզպետարանը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 18.07.2017թ. ժամը 14:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ «ԱՄ ՀԲՄԱԾՁԲ-17/6» ծածկագրով մրցույթի

գնահատող հանձնաժողովը 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Միլաքս գրուպ» ՓԲԸ-ին, քանի որ վերջինս ներկայացրել էր ցածր գնային առաջարկ:

Ամփոփելով, *Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ ընդունում է այն փաստական հանգամանքը, որ «Միլաքս գրուպ» ՓԲԸ-ի գնային առաջարկում ԱԱՀ-ն սխալ է հաշվարկված:*

Այսպիսով, ամփոփելով վերը նշված փաստերը, Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն, «Միլաքս գրուպ» ՓԲԸ-ին Մրցույթի թիվ 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելով, խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները:

Ինչ վերաբերում է «Սյունիք» ՍՊԸ-ի բողոքով ներկայացրած 2-րդ պահանջին՝ «ԱՄ ՀԲՄԱԾՁԲ-17/6» ծածկագրով մրցույթի 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Սյունիք» ՍՊԸ-ին, ապա Խարհուրդն արձանագրում է, որ Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո իրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը իրավերով սահմանված պահանջներին, և իրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Ընդ որում, նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են իրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Հետևաբար, Խորհուրդը գտնում է, որ «Սյունիք» ՍՊԸ-ի բողոքը սույն պահանջի մասով ենթակա չէ բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

«Սյունիք» ՍՊԸ-ի 13.07.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի՝

1. դադարեցնել «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 1 արձանագրությամբ կայացված որոշումը՝ «Միլաքս գրուպ» ՓԲԸ-ին թիվ 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ:

2. «Սյունիք» ՍՊԸ-ին Մրցույթի թիվ 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին բողոքաբերի պահանջը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

<<ՍՅՈՒՆԻՔ>> ՍՊԸ-Ի

ՏՆՕՐԵՆ Բ. ՄԱՐԳԱՐՅԱՆԻՑ

# Դ Ի Մ Ո Ւ Մ՝

Հարգելի բողոքարկման խորհրդի անդամ.

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից 06.06.2017թ. հայտարարվել է <<ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6>> ծածկագրով <<Արմավիրի մարզի օբյեկտների վերանորոգման աշխատանքների>> ձեռքբերման գնման ընթացակարգ: Մեր ընկերությանը սահմանված կարգով հայտ է ներկայացրել գնման ընթացակարգի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ չափաբաժիններին: Հայտերի բացումը տեղի է ունեցել 21.06.2017թ.: Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման արդյունքում մեր ընկերությանը 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով զբաղեցրել է 2-րդ տեղը, այնինչ նշված չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակց ՝ <<Միլաքս գրուպ>> ՓԲԸ-ի գնային առաջարկում առկա է անհամապատասխանություն՝ մասնավորապես 2-րդ չափաբաժնի կատարման համար մասնակիցը ներկայացրել է 28 847 000 ՀՀ դրամի գնային առաջարկ, որի ԱԱՀ-ն օրենքով սահմանված կարգով կազմում է 4 812 400 ՀՀ դրամ, սակայն մասնակիցը որպես ԱԱՀ-ի գումար ներկայացրել է 4 812 000 ՀՀ դրամ, այսինքն սահմանված չափից 400 ՀՀ դրամ պակաս, իսկ 5-րդ չափաբաժնի մասով մասնակիցը ներկայացրել է՝ 16 108 000 ՀՀ դրամ գնային առաջարկ, որի ԱԱՀ օրենքով սահմանված կարգով կազմում 2 684 600 ՀՀ դրամ, սակայն մասնակիցը որպես ԱԱՀ-ի գումար ներկայացրել է 2 685 000 ՀՀ դրամ:

Միաժամանակ հայտնում ենք, որ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն <<Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով

N 31128

«13» 07 2017թ.

վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման>>:

ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն <<մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման>>, իսկ 40-րդ կետի համաձայն հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերի համաձայն ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից կազմակերպված <<ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6>> ծածկագրով ընթացակարգի գանահատող հանձնաժողովը չի պահպանել օրենսդրության պահանջները, առաջարկում ենք մերժել ընթացակարգի 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից <<Միլաքս գրուպ>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը և նշված չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Սյունիք>> ՍՊԸ-ին:

Կանխավ շնորհակալություն:

<<Սյունիք>> ՍՊԸ-ի տնօրեն՝ Բ. Մարգարյան

Բանկային գաղտնիք +

Տպեց՝ Եղիազարյան Մարիամ ԱրմենիF209 13/07/17 10:35:35

օրինակ 1

63D0

# Յունիբանկ Մաշտոց մասնաճյուղ

13/07/17

## Վճարման հանձնարարագիր N 170713021097043 01

13/07/17 10:35:42 F209

| Դեբետի հաշիվ | 24119005122700 / 30202 | Գումար |
|---|---|---|
| Վճարողի բանկ | AM24143 AM24143 Յունիբանկ Մաշտոց մասնաճյուղ | 30,000.00 AMD |
| Վճարող | «Սյունիք» ՍՊԸ 04406689 ԵրևանՒսակովի պող. | |
| Հարկատուի կոդը | 2004406689 | |
| Կրեդիտի հաշիվ | 900008000482 | |
| Ստացողի բանկը | AM90000 Կենտրոնական գանձապետարան | |
| Ստացող | ՀՀ Ֆինանսների նախարարություն | |
| Գումարը տառերով | Երեսուն հազար ՀՀ դրամ | |
| Վճարման նպատակը | «Սյունիք» ՍՊԸ Գնումների մասին օրենքով նախատեսված դեպքերում բողոքարկման վճար | |

Կ.Տ. Վճարողի ստորագրությունը Բանկի ստորագրություն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 , ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am


ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 02.08.2017թ.
02/04/3202-17 գրության

Հարգելի պարոն Կարապետյան

Ուսումնասիրելով Ձեր վերոնշյալ գրությունը (այսուհետ՝ Գրություն)՝ հայտնում ենք հետևյալը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են իրավերի պահանջներին անհամապատասխան:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարի կողմից հաստատված հրավերների օրինակելի ձևերի, որպես հայտի ապահովում ներկայացվելիք վճարման պահանջագրի լրացման կարգով սահմանված է, որ 19-րդ կետով ներկայացված դաշտը պարտադիր ստորագրվում է շահառուի (պատվիրատուի) կողմից՝ վճարման պահանջագիրը բանկ ներկայացնելու նպատակով:

Վերոգրյալով պայմանավորված և նկատի ունենալով, որ Գրությանը կից ներկայացված վճարման պահանջագրում 19-րդ կետով ներկայացված դաշտը ստորագրված է մասնակցի կողմից և արդեն անհնար է դառնում այդ փաստաթուղթը բանկ ներկայացնելու նպատակով

շահառուի (պատվիրատուի) ստորագրությամբ հաստատելը, գտնում ենք, որ նշված մասնակցի հայտը ենթակա է մերժման:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Կ. ԹԱՄԱԶՅԱՆ

Հանրային ֆինանսների կառավարման
մեթոդաբանության վարչություն
Հեռ. 011 800 258